ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ. ԺԱՄԱՆԱԿԻ ԱՆՍԽԱԼ ՏԱՐԵԳԻՐԸ*

Ռուզաննա Սայիյան

Բանալի բառեր՝ հեգնանք, հակադրություն, հեգնանքի և դրամատիզմի զուգակցում, ժամանակի կատեգորիա, գոյի իմաստավորում, իմպերատիվ:

Հիրավի, գրական-քննադատական դաշտում Հովհաննես Գրիգորյանն ընկալվում է նորագույն գրականության բանաստեղծության կառուցաբանական-ստեղծագործական նոր կերպով ու ասելիքով: Ուշագրավ է ժամանակի կատեգորիայի ու մարդու գոյի գրիգորյանական ըմբռնումն ու ներկայացումը, որում անտարակույս առկա է հեգնանքի տարրը: Սա թերևս դարձել է նրա ասելիքի յուրատիպ ոճը: «Նա կանգնում է աշխարհի աննկատ մի անկյունում ու փորձում ժամանակի սրտազարկերը «որսալ» երկրագնդի ամբողջականությունը պահող նյարդային համակարգով»[1]: Հեգնանքը, իսկ երբեմն նաև գրոտեսկը դառնում են նրա պոեզիայի այսպես կոչված ռազմավարությունը: Եվ այս միտումը տիպական է գրեթե բոլոր թեմաներին՝ հայրենիրգությունից մինչև սիրերգություն ու աշնան թեմա: Ժամանակ արտացոլող ստեղծագործությունները /«Կես ժամանակ»/ ևս զերծ են կրկնումներից ու ինքնանպատակ լինելուց: Այս թեման ևս յուրատիպ է իր պարոդիկ ու պարադոքսալ ընկալումներով: «Միլենիում» բանաստեղծության մեջ հեգնանք ու դրամատիզմը դառնում են ասելիքի կառուցակարգ՝ ընդգծելով ասելիքի խորքը: Հեգնանքն իբրև ստեղծագործական սկզբունք արտահայտվում է տրամադրությունների հարուստ գամմայով՝ հավասարակշռությունից մինչև ինքնակեղեքում, սառնասրտությունից մինչև կիրք:

«Հովհաննես Գրիգորյանի հեգնանքը, որն ընդհանրապես նրա պոեզիայի էատարրեից է, միշտ չէ, որ պետք է ընկալել ուղղակի իմաստով: … Հովհաննես Գրիգորյանը, հեգնելով, հաճախ իր կարոտն է արտահայտում այդ երևույթների հանդեպ, և արդյունքում՝ նույն միտքը նույն բանաստեղծության մեջ բովանդակում է տարբեր իմաստներ և հանդես գալիս տարբեր հոգեբանական կշիռներով[2]:

Անցյալը- ավարտված գերեզմանոց,
Ուր հայացքներ են թափառում,
Իսկ աչքերը փակել են վաղուց,
ծայների անտառ, տոնածառի նման գունագեղ հեքիաթներ,
բենգալյան կրակներով լուսավորված ներսից,
խնամված ու մշակված գազոնները առասպելների՝
արյունով ու արցունքով լղոզված գեղեցիկ պատմություններ,
որոնք երեխաները սերտում են դպրոցում,
Իսկ մեծահասակները
աֆորիզմներով ու իմաստուն նախադասություններով հագեցած
ներկայացումներ են սարքում բեմերի վրա՝ կենդանի մարդկանց հագցնելով
հանգուցյալների շորերը և ստիպելով նրանց խոսել այնպես,
ինչպես ժամանակներ առաջ
հին մարդիկ…[3]

---

* Հոդվածն ընդունվել է 10.12.2015:
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., պրոֆեսոր Վ.Եղիազարյանը:

Այստեղ կարելի է ընդհանրություններ տեսնել Շչեդրինի և Գրիգորյանի ստեղծագործությունների հեգնական ենթատեքստի մեջ: «Շչեդրինի իրոնիան չափազանց դառն է՝ շնորհիվ իր լրջության, առաջադրած խնդիրների կամ ծաղրի առարկայի կարևորության»[4]:

Հեգնանքն այստեղ փիլիսոփայական երանգ է ստանում, քանի որ ասելիքի ընդգրկվածության մեջ առկա են ժամանակի, կյանքի իմաստավորման տարբեր կշիռներ: Սա Գրիգորյանի հեգնական վերաբերմունք է իրականության նկատմամբ, որն այստեղ ևս դառնում է նրա ստեղծագործության սկզբունքը: «Հովհաննես Գրիգորյանը այն քչերից է, - գրում է Հովհաննես Խաչատրյանը,- որ ներքուստ համոզված է՝ գրականությունը թեև կապված է օրվա հետ, սաղմնավորվում է իր ժամանակի տրամադրությունների, մեծ ու փոքր ցավերի, մեծ ու փոքր ուրախությունների մթնոլորտում, այնուհանդերձ ապրում է իր ինքնուրույն կյանքով և ունի իր ապրելու և մեռնելու ժամանակը, ունի իր ներաշխարհի «տնտեսությունը», որն ազատ է, անկախ, թե ինչ ժամանակներ են «դրսում», բայց և ազատ ու անկախ է այնքանով, որքանով՝ ազատ ու անկախ է ստեղծագործողն իր էությամբ, մտածողությամբ, անհատականությամբ»[5]:

Իրարամերժ ապրումները հերթափոխում են միմյանց՝ առանց ընթերցողի վրա փաթաթելու բանաստեղծական այն տրամադրությունները, որոցով մատնանշվում է բարու և չարի, իրականության ընդունելի և անընդունելի կողմերի սահմանագիծը: Այստեղ առկա է արժեքների գնահատման կամ երևույթների վերարժևորման բանաստեղծական մղումը, որով նա բնավ «չի ստիպում մարդկանց խոսել այնպես, ինչպես ժամանակներ առաջ հին մարդիկ»: Ժամանակի և ժամանակների միջակայքում հայտնված հեղինակի համար ժամանակը դառնում է անցյալի քննման, ներկայի արժևորման ու ապագան իմաստավորելու գործոն: Խոսե Օտեգա-ի-Գասեթի «Վերածվիր ինքդ քեզ» իմպերատիվը նրբորեն արտահայտված է նրա ստեղծագործական ու գեղագիտական կերպավորումների ենթատեքստային շերտերում:

Անապատի կենտրոնում ապրում է քարը,
Նրա գաղտնիքը կարոտ է լուծման,
Անապատում այնքան ավազ կա,
Նրանց պետք է խնամքով մշակել:
Իսկ քարանձավում ապրում է մարդը
և նա բազմաթիվ ատրճանակներ ունի,
նա իր քարանձավը խնամքով մաքրում է
եվ վարագույր ունի դռան վրա կախած:

Քարանձավը որպես համամարդկային հիշողության արքետիպ բանաստեղծին մղում է ժամանակի խորհրդի վերծանման: Այս վերծանման մեջ բյուրեղյա ազնվությունը հասնում է այնտեղ, ուր ատրճանակները մաքրվում են, բայց դրանցով կրակելը վաղուց մոռացված է:

Նա գիրք է գրում բարության մասին,
Իսկ գրքում չկա և ոչ մի ցիտատ,
Հետո մաքրում է ատրճանակները,
Իսկ կրակելը վաղուց մոռացել է [6]:

Հեգնանքով զուգակցվող հոգեբանական պեղում ու խորք, ասելիքի ծածկագրում ու ծածկագերծում: Թերևս այսպիսի հակադրությունն է, որ յուրատիպ է դարձնում Գրիգորյանի պոեզիայի համանվագայնությունը: Ըստ էության, համանվագայնությունն ասելիքի մեջ է և ոչ նրա ձևի: Ասելիքն աստեղ ունի իր աշխարհագրությունը, ասել է թե՝ տարածքը, որը ենթադրում է դինամիկ ընթացք, այսինքն հավերժի խորհուրդ:

Դիպուկ ու անշեղ է ժամանակի հայտնության գրգորյանական ըմբռնումը: «Իր նկատմամբ անկողմնակալ լինելու համար էլ Գրիգորյանը դուրս է գալիս իր «տարածքից», ինքն իրեն անգամ «դիտարկում-քննում» է կողքից, բանաստեղծի ամեն տեսակ կեցվածքից հեռանում, հասնում է այն կետին, ուր ինքը ոչինչ է, այնքան ոչինչ, որ ոչ մեկը չի նկատում, անգամ նա, ով անցնում է իր միջով…»[7]:

Ախ, նետիր քո գիպսե սկավառակը, վերջապես,
գիպսե արծան,
որ ապրում ես ապրողներից երկար:
Ահա, նորից գնում ես արևածաղիկների միջով,
Բայց չկա ուրախություն ո՛չ երկնքում և ո՛չ էլ
հողի վրա:
Սոխակների քառաձայն երգչախումբը
թեև հնազանդ հետևում է ինձ, բայց վաղուց կորել է մեղեդին,
չկա ու վերջ, կարծես չի էլ եղել երբևէ…
Ուսիս անշարժ ագռավն է՝ չվերծանված խորհրդանիշ,
անմեկնելի հիերոգլիֆ, միգուցե անցած-գնացած փառքերի:

Հեգնանքի լեզվով արտահայտված այս տողերում ևս բացառված է կամայականությունն ու եսասիրությունը: Զուգորդական հետաքրքիր կապերի միջով /ագռավը անցած գնացած փառքերի չվերծանված խորհրդանիշ, գիպսե սկավառակ-գիպսե արծան/ հեղինակը գեղարվեստորեն վերարտադրում է իրականության կերպը՝ ժամանակների հոլովույթում ու ամեն ինչ հստակ է ու որոշակի. չկա ուրախություն ո՛չ երկնքում և ո՛չ էլ հողի վրա:

Այնուհանդերձ, բանաստեղծի խորը հիասթափությունների մեջ կարելի է բացահայտել կյանքն իմաստավորելու, նրան յուրատիպ երանգներ հաղորդելու էկզիստենցիալ մղումը.

Եվ մի օր,
Գիտեմ, կլինի այդպիսի մի օր,
միանգամից կտատանվեն վարագույրները՝
ուրեմն փչում են համընթաց քամիները,
և առագաստները շնչում են ամբողջ ուժով,
և պարզորոշ կլսեմ երգը
և կուզենամ քնել ու այլևս չարթնանալ
և կնստեմ, վերջապես կնստեմ՝
անծայրածիր օվկիանոսի գորշ ալիքներ վրա,
կտեսնեմ սիրտս՝ խոցված նետով,
երջանիկ ցավի մեջ բռնված,
և արցունքակալված աչքերով
կթաթախեմ գրիչս թանաքի մեջ
և կգրեմ. օր առաջին…

Ահա պարադոքս-կյանքի մարտահրավեր նետելու փորձված ու անհրաժեշտ միակ եղանակը, եթե ուզում ես հետագծիդ նոր գիծ ավելացնել: Բայց և այս նոր օրվա մեջ նա վերստին առերեսվում է անցյալին, որը խեղճ ու կրակ բառերով դաջված է իր իսկ գրքերում: Ու ամանազարմանալին. այդ բոլոր գրքերը միաբերան աղաղակում են՝ համբերիր: Գուցե և ժամանակն է արդեն ձեռնոց նետելու կյանքի աբսուրդ նշանաբանին՝ համբերությունը կյանք է, քանզի ամբողջ մի կյանք ապրում ենք համբերելով, ա-

պավինելով այդ ինքնախաբերություն-հույսին, կանգառին միայն հասկանալով, որ խորախորհուրդ կայանքը վերածել ենք ինքնանպատակ մի համբերության. «…համբերիր ծնվելուցդ անմիջապես հետո // և այդպես կամաց-կամաց համբերիր // մինչև փառավոր ավարտը քո օրերի»:

Բանաստեղծը չի կարողանում տեղավորվել նոր օրվա մեջ, որովհետև ժամանակը ելնում է իր միջից, իսկ շուրջը մարդիկ են, ովքեր պատրաստակամ օգնում են նրա մարմնին երկինք բարձրանալու:

Նա իր մեջ շերտավորում է իրականությունը, հասնում նրա հատակին, իսկ ողբերգական շերտերը ողբերգության չվերածելու համար բանաստեղծը դիմում է նրա սահմանը հատող թեթև հնարքին՝ հեգնանքին, դրանով իսկ նոր մարդուն ազատագրում կյանքի բեռից, նրան մղում ինքնադրսևորման: Ապրել միջավայրում, ժամանակների մեջ ու բարձր կանգնել ժամանակներից: Կրել ժամանակի ոգին, բայց չստրկանալ ժամանակների միջով հոսող իրականության թելադրած օրենքների առաջ:

Ինչպիսի՜ տաղտուկ…
այսքան տարիմ ապրել առանց անհատի պաշտամունքի,
առանց ճամբարների համակենտրոնացման,
առանց ծողովների, միտինգների,
որոտընդոստ ծափահարությունների և մանավանդ,
առանց գրաքննադատության…
Կգան ուրիշ օրեր [8]:

Վ. Հակոբյանն իրավացիորեն նշում է. «Հովհաննես Գրիգորյանի մտածողությունն ու ոճը այնքան բնական է, որքան որ նույն պահին երեք տարբեր ժամացույցների նույն ժամանակը ցույց տալն՝ իրարից անկախ: Եվ սա ոչ թե խոսքի կամ պատկերի փիլիսոփայություն է, այլ վիճակի ու ժամանակի»[9]:

«Կես ժամանակ» բանաստեղծությունների ժողովածուն գրեթե ամբողջությամբ հիմնված է ոչ միայն ինքնաներկայացման ու ինքնապահպանման, այլև ինքնաբացասման պարադոքսալ սկզբունքի վրա: Բանաստեղծը նաև այս կերպ է հաղթահարում հուզազգացմունքային այն ներքին կոնֆլիկտը, որը ծնվում է նրա հանրային ու ազգային մտածողության արդյունքում:

Իսկ «Ժամանակներ, ժամանակ և կես ժամանակ» բանաստեղծության «Ու՞ր կորան» հռետորական հարցադրմամբ բանաստեղծը լասելի է դարձնում անարդարության լռության ձայնը: Երկնային տիրոջը հղված հռետորական հարցն ալիքվում է հարակրկնությամբ՝ ավելի սաստկացնելով արարչալքումն իր իսկ ստեղծածից:

Մարդու մեղսագործ հոգին այդ չափերին համապատասխան ազատություն է որոնում ու գտնելու հույսով ավերածությունների վրա կառուցում է Աստծո նոր տուն.

Բայց Տերն արդարադատ, որ զարմանքով հետևում է երկնքի
կիսաբաց պատուհանից, կհարցնի չէ՞ մի օր՝
ու՞ր կորան լեռներն ու ձորերը,
ու՞ր կորան դաշտերը բերրի և ծառերը պտուղներով ծանրացած,
ու՞ր կորան լճերն ու գետերը, և ընդհանրապես,
ու՞ր կորավ այս հին,
թեև փոքրիկ երկիրն այս մեծ շինության հաստաբետ
պատերի ու կտուրի տակ…

«Թակարդ» բանաստեղծության մեջ հեղինակը ավելի է ընդգծում անհատի բախումը ժամանակի անշարժության ու անորոշության փակուղուն:

Ժամանակի հյուսած թակարդում խճճվել է բազմանդամ ընտանիքը: Նրա անդամների, տանտիրոջ ու լրագրողի «Շարժվեցինք» ինքնահուսադրող հրահանգը դառնում է ընդամենը անհույս մի ճիգ: Ինքնամփոփող «Շարժվեցինք» [10] քարացած անշարժության սկիզբն է ազդարարում՝ հաստատելով թակարդում հայտնվածի ապլանալիությունը: Նրբորեն արտահայտված հեգնանքն այստեղ ևս նրա ոճը դարձնում է ինքնատիպ, նկարագրվող դեպքերի ու երևույթների կոնկրետությունն առավել ամբողջական ու կառուցիկ:

Ինչպես տեսնում ենք հեգնանքը նպաստում է նրա ստեղծագործելու ազատությանը, որով բանաստեղծությունը ոչ միայն դառնում է եղելություն, այլ դրանից բարձր կանգնելու ներքին մղում: Նա ապրում է ժամանակը՝ ներքին խորը տրամադրություններով ու բարդ հուզազգացմունքայնությամբ:

Ժամանակը: Ժամանակի մեջ և ժամանակներից դուրս: Այս ուշագրավ տարածքը ևս դառնում է Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի ասելիքի ենթատեքստը՝ ընդգծելով նրա համամարդկային, ազգային ու անհատական մտածողության սահմանները, ըստ որում հիմնական կշռույթը մարդկայինի մեջ է. ով է մարդը, ի՞նչ առաքելություններ ունի նա: Թերևս այսպես նա բացահայտում է իրականության քաղաքական, հասարակական, մշակութային համայնապատկերը՝ ուրվագծելով ցանկալի տեսլական:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հակոբյան Վ., Քսաներորդ դարի հայ քնարերգության զարգացման հիմնական միտումները: Ստեփ., «Արցախ» 1998, էջ 266:
2. Նիկողոսյան Ա., ...Բայց սերն է, սերն է մեզ տանում առաջե, հոդվածը՝ «Գրառումներ ընթացքից» գրքից, 2007:
3. Գրիգորյան Հ., Կես ժամանակ, Եր., ՀԳՄ «Նոր Դար» հրատ., 2002, էջ 82:
4. Մակարյան Ա., Երգիծական ստեղծագործություն, դիտողություններ ու նշումներ, Հայպետհրատ, Եր., 1957, էջ 164:
5. Հակոբյան Վ., նշված աշխ., էջ 267:
6. Գրիգորյան Հ., նշված աշխ., էջ 44:
7. Հակոբյան Վ., նշված աշխ., էջ 266:
8. Գրիգորյան Հ., նշված աշխ., էջ 67:
9. Հակոբյան Վ., նշված աշխ., էջ 270:
10. Գրիգորյան Հ., նշված աշխ., էջ 67:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հովհաննես Գրիգորյան. ժամանակի անսխալ տարեգիրը

Ռուզաննա Սայիյան

Հեգնանքը, իսկ երբեմն նաև գրոտեսկը, Հովհաննես Գրիգորյանի պոեզիայի այսպես կոչված ռազմավարությունն է: Եվ այս միտումը տիպական է գրեթե բոլոր թեմաներին՝ հայրեներգությունից մինչև սիրերգություն ու աշնան թեմա: Հոդվածում արտացոլված են «Կես ժամանակ» գրքի որոշ ստեղծագործությունների վերլուծություններ, որոնք ևս զերծ են կրկնումներից ու ինքնանպատակ լինելուց, յուրատիպ պարոդիկ ու պարադոքսալ ընկալումներով: Հեգնանքն այստեղ ևս փիլիսոփայական երանգ է ստա-

նում, քանի որ ասելիքի ընդգրկվածության մեջ առկա են ժամանակի, կյանքի իմաստավորման տարբեր կշիռներ:

РЕЗЮМЕ
Ованес Григорян: “Безошибочная летопись времен”
Рузанна Саиян

Ключевые слова: *ирония, противоречие, сочетание иронии и драмы, время, категория времени, смысл существования, императив.*

Ирония и порой гротеск – так называемые стратегические средства поэзии Ованеса Григоряна. И эта тенденция доминирует во всех темах – от патриотизма, любовной лирики до осенней тематики. В статье представлен анализ некоторых произведений из книги "Половина времени”, лишенных повторения и самоцели и отмеченных пародийным и парадоксальным авторским восприятием. Ирония здесь приобретает философский тон, т.к. как в повествовании присутствуют различные размышления о времени, осмыслении жизни.

SUMMARY
Hovhannes Grigoryan: "Faultless Chronicle of the Times
Ruzanna Sayiyan

Keywords*: irony, contradiction, a combination of irony and drama, time, the category of time, the purport of existence, moral imperative.*

Irony and sometimes grotesque are the so-called strategic means of poetry by Hovhannes Grigoryan. And this trend is dominant in all subjects from patriotism, love poetry to the theme of autumn. The article presents an analysis of some of the works from the book "Half of the Time," noted for the author's parody and paradox and deprived of repetition and an end in itself. The irony here acquires a philosophical tone, as the narration is marked by different reflections on the time and the comprehension of life.